

ՎԵՆԱՓԱՌ-ՆԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԸ ԱՎԱՏՐԻԱ

(28 նոյեմբեր - 2 դեկտեմբեր 2005 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը, հրավերով Կաթողիկ Եկեղեցու Ավստրիայի Կլյուգեն Ֆուրտ մարզի Ալոիս Շվարց եպիսկոպոսի, ինչպես նաև Վիեննայում Տայոց Գրերի Գյուրի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին մասնակցելու համար, նոյեմբերի 28-ին մեկնեց Վիեննա:

Վեհափառ Տայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պարասխանարու Ս. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը և Ս. Վազգեն արեղա Նանյանը, որպես գավազանակիր:

Օղանավակայանում Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Կենտրոնական Եվրոպայում Տայրապետական պապվիրակ Ս. Մետոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, Վիեննայի կարդինալ Քրիստոֆեր Շյոնբորնի ներկայացուցիչ Նելմուր եպիսկոպոս Քրեյցերը, Ղալբի Եկեղեցու Ավստրիայի առաջնորդ Ամբա Գաբրիելը, «Պրո Օրիենտե»-ի գործադիր քարտուղար դոկտ. Յոհան Մարտեն, Մայր Աթոռի՝ Ավստրիայում պաշտոնավարող և ուսանող հոգևորականները և Ավստրիայի հայ համայնքի ներկայացուցիչները:

Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը ժամանելուց հետո հյուրընկալվեց կարդինալ Շյոնբորնի նստավայրում:

Օրվա երկրորդ կեսին Տայոց Տայրապետը հանդիպեց Ավստրիայի Տանրապետության նախագահ Տայնց Ֆիշերին երկրի նախագահի նստավայրում: Ավստրիայի նախագահը բարձր գնահատեց Տայոց Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաև հայ համայնքի բերած նպաստը Ավստրիայի փոփոխական-հասարակական կյանքում:

Ի հիշատակ այս հանդիպման Նորին Սրբությունը երկրի նախագահին նվիրեց հայ զարդարվեստի ավանդների հետևողությամբ պարարտված մի գավաթ:

Նորին Սրբությունը երեկոյան այցելեց Վիեննայի Սուրբ Հովսիսմեն եկեղեցի: «Տրաշափառ»-ի արարողությունից հետո հավաքվածներին օրհնության և գնահատանքի իր խոսքը ուղղեց Վեհափառ Տայրապետը՝ վերհիշելով Վիեննայի համալսարանում իր ուսումնառության փորձերը, ինչպես նաև այդ շրջանի համայնքային, եկեղեցական կյանքը, ուրախությամբ նշելով, որ այսօր ևս իր վաղեմի բարեկամները իրենց գործուն մասնակցությունն են բերում համայնքի կյանքին, որը միաժամանակ նոր լիցք և շունչ է ստանում նաև երիտասարդ հայորդիների գործունեությամբ: Նորին Սրբությունը փնդի հայությանը մաղթեց, որ իրենց ազգային-հոգևոր ինքնությունը պահեն մշակութային ավանդներով այնքան հարուստ եվրոպական այս մայրաքաղաքում: Ապա փնդի ունեցավ Աջհամբույր:

Այնուհետև ի պատիվ Վեհափառ Տայրապետի փրվեց համայնքային ընթերիք «Ինտերկոնփինենտալ» հյուրանոցում:

Նոյեմբերի 29-ի առավոտյան Գարեգին Բ Տայրապետը Ալոիս Շվարցի հրավերով մեկնեց Կլյուգեն Ֆուրթ: Ճանապարհին Նորին Սրբությունը հյուրընկալվեց Սուրբ Գևորգ վանքում: Այստեղ հյուրասիրություն կազմակերպվեց ի պատիվ Վեհափառ Տայրապետի:

Նորին Սրբությունն այնուհետև այցելեց ղալբիների կենտրոն: Տայոց Տայրապետին այստեղ ևս դիմավորելու էր եկել Ղալբի Եկեղեցու Ավստրիայի թեմի առաջնորդ Ամբա

Գաբրիելը: Հայոց Եկեղեցու պարավիրակության անդամները դպրի հոգևորականների հետ եկեղեցում հայերեն միասնաբար երգեցին «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականը:

Ի հիշարակ այս հանդիպման Գաբրիել Երկրորդը մի սրբանկար նվիրեց Կրեդի Եկեղեցուն: Արարողությանը ներկա էին մեծ թվով հավատացյալներ:

Երեկոյան ժամերգության ընթացքում էկումենիկ արարողություն կատարվեց Կյուզեն Ֆուրքի Մայր Տաճարում, որի ընթացքում քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով Կրեդի էկումենիկ ոգին:

Արարողության ընթացքում մի շարք երգեր կատարվեցին հայերեն: Նորին Սրբությունը եկեղեցուն նվիրեց մի սրբանկար, իսկ Արիս Շվարց եպիսկոպոսին՝ լանջախաչ: Ի պարիվ Վեհափառ Հայրապետի Արիս եպիսկոպոսը երեկոյան ընթրիք տվեց Կրեդի առաջնորդաբանում:

Նոյեմբերի 30-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Ավեն Զուրբ քաղաք, որի մուտքին Հայոց Եկեղեցու պարավիրակությանը դիմավորեցին քաղաքապետը և Կրեդի եկեղեցական վարչության անդամները:

Եկեղեցու մուտքի մոտ հավաքված երեխաների հոգևոր երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը մուտք գործեց եկեղեցի՝ կատարելով գոհաբանական աղոթք, ապա շրջեց տաճարում, իջնելով և այսպեղ գրավող պարմական հին գեղատաաբարան: Նորին Սրբությունը Ս. Մեղանի արժաթյա ականակուտ խաչ նվիրեց եկեղեցուն: Հայոց Հայրապետը այնուհետև այցելեց «Մուլիարետ» հոգևոր կենտրոն, ուր հյուրասիրություն կազմակերպվեց ի պարիվ Վեհափառի: Այս կազմակերպությունը հոգում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մի քանի սաների կրթության համար անհրաժեշտ ծախսերը: Տեղի ունեցավ եկեղեցական արարողություն, որի ընթացքում կենտրոնի երգչախումբը սլավոներեն մի շարք հոգևոր երգեր կատարեց:

Վեհափառ Հայրապետը ծանոթացավ կենտրոնի գործունեությանը՝ հայտնելով իր գնահատանքը, և մի սրբանկար նվիրեց ի հիշարակ այս հանդիպման:

Նույն օրը, երեկոյան, Հայոց Եկեղեցու պարավիրակությունը վերադարձավ Վիեննա, ուր ընդունություն էր կազմակերպվել «Պրո Օրիենտե»-ի կողմից «Մահեր» հյուրանոցի դահլիճում:

Վեհափառ Հայրապետը առանձին հանդիպում ունեցավ նաև կարդինալ Շյոնբորնի հետ՝ նրան նվիրելով Ս. Պարարագի մի սկիհ:

Դեկտեմբերի 1-ին Ավստրիայի գիությունների ակադեմիայի Բյուզանդագիտական բաժանմունքում Կրեդի ունեցավ Հայոց Գրերի Գյուրի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հանդիսավոր բացումը:

Այս գիտաժողովը կազմակերպվել էր Բյուզանդագիտական ինստիտուտի կողմից: Կազմակերպիչներն էին Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պարավիրակ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը և Բյուզանդագիտության ինստիտուտի պրոֆեսոր Վերներ Զայթլը:

Գիտաժողովի բացումը կատարեց պրոֆեսոր Զայթլը: Այնուհետև ողջույնի խոսքերով գիտաժողովի մասնակիցներին դիմեցին Վիեննայի համալսարանի ռեկտոր Գ. Վինկլերը և Ավստրիայի գիությունների ակադեմիայի Բյուզանդագիտության բաժանմունքի նախագահ Յ. Կոդերը:

Գիտաժողովի մասնակիցներին օրհնության իրենց խոսքն ուղղեցին Վիեննայի կարդինալ Զրիարոֆեր Շյոնբորնը և Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂՈՍՈՍԱՆԵՐԻ
ՄԱՍԻՆԻՍՏՐԱՏՈՐԱՏԻ
ԿԵՆՏՐՈՆԻ
ՔԵՆՏՐՈՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂՈՍՈՍԱՆԵՐԻ
ՄԱՍԻՆԻՍՏՐԱՏՈՐԱՏԻ
ԿԵՆՏՐՈՆԻ
ՔԵՆՏՐՈՆԻ

ԱՎԱՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅՆՑ ԽԻՇԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՎԵՆԱՓԱՍ ԿԱՅՐԱՊԵՏԸ ՎԻՇՆՆԱՅԻ Ս. ԿՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ




ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԿԼԱԳԵՆ ՖՈՒՐՏԻ ՂՄՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ



ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԼԱԳԵՆ ՖՈՒՐԻՏԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏԵՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՈՒՄ
ՇՎԱՐՅԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԹԵՊՍ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ



ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒՐԿԻ ՏԱՃԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՆ ԳԵՏՆԱՀԱՐԿՈՒՄ





ՆԱԹՈՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՄԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Ա. ԿԱՐԴԻՆԱԼ ՔՐԻՍՏՈՑ ՇՅՈՆՔՈՐՆԻ ՆԵՏ

Բ. ՎՐԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՆ ԹԱՄԱԶ ԳԱՄԿՐԵԼԻՉԵԻ (ԶԱՆԻՅ)
ԵՎ ՎԻԵՆՆԱՅԻ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՊՐՈԿԵՍՈՐ ՎԵՐՆԵՐ ԶԵՅԲԹԻ ՆԵՏ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂԱՎՈՒՄ**

Մեր սիրեցյալ եղբայր Վիեննայի Գերաշնորհ Կարդինալ Բրիայոնֆ Շյոլերորն,
Գիտաժողովի մեծահարգ կազմակերպիչներ և մասնակիցներ.

Միտով և ջերմորեն ողջունում ենք Ձեզ և երախտագիտության Մեր խոսքը բերում
հայ ժողովրդի կյանքում շրջադարձային և կարևոր իրադարձության՝ Հայոց
Գրերի արարման 1600-ամյակի առիթով կազմակերպված միջազգային այս գի-
տաժողովին:

Մեր գնահատանքն ենք բերում Ավարդիայի գիտությունների ակադեմիային և
Բյուզանդագիտության ինստիտուտին, Վիեննայի համալսարանի Բյուզանդագի-
տության և Նոր Հունարենի ինստիտուտին, Ավարդիական-Հայկական Ուսուցման
Ընկերությանը, պրոֆեսոր, դոկտոր Վերենը Զայրթին, Կենտրոնական Եվրո-
պայի Հայրապետական պարվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս
Գրիգորյանին և գիտաժողովի կազմակերպման գործում բոլոր աջակիցներին՝
իրենց դրսևորած նախաձեռնողության համար:

Հարկանշական է, որ Հայոց Գրերի Գյուրի 1600-ամյակին նվիրված այս գի-
տաժողովը հրավիրվել է Ավարդիայում, որտեղ դարերով ներկա է հայ մշակույ-
թը՝ հայ համայնքով, եկեղեցիներով, Վիեննայի Միխայրյան միաբանության
առաքելությամբ: Հայոց ազգային-եկեղեցական արժեքներն այսօր էլ մեծապես
գնահատվում են օրինյալ այս երկրում, որի մի վկայությունն էր Արևելյան Եկեղե-
ցիները, նրանց մշակույթն ու արվեստը արևմտյան աշխարհին ներկայացնող
«Պրո Օրիենտը» կազմակերպության նախաձեռնությամբ 2002 թվականին Վիեն-
նայի Արքեպիսկոպոսարանի թանգարանում «Հայաստանի ոսկին» խորագրով
ցուցահանդեսի բացումը, որտեղ ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
թանգարաններում պահվող ավանդական սրբություններ, հայ եկեղեցական ար-
վեստի գործեր: Ուրախություն էր Մեզ համար, որ ցուցահանդեսի բացմանը ներ-
կա են եղել քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ավելի քան 300 մրավորա-
կաններ, արվեստագետներ ու ավարդիահայ գաղութի ներկայացուցիչներ:

Նորբյանական առիթով բացվող ներկայացուցչական այս գիտաժողովը կոչ-
ված է արժեկոթնելու հայ գրական հարուստ ժառանգությունը, նոր խոսք ասելու
Հայոց Գրերի գյուրից հեկո հայոց մշակութային կյանքին վերաբերվող տարբեր
բնագավառներում:

Երանելի Մաշտոց վարդապետի ձեռքով Հայ Գրի սրեղծումը մեր ժողովուրդն
ընդունում է որպես աստվածային նոր շնորհ և օրհնություն իր կյանքում: Հայոց
գրերը ծնունդ առան Աստվածաշունչը թարգմանելու նպատակով, որպեսզի ժո-
ղովրդի հոգում զորանա քրիստոնեական հավատի լույսը, որը, Սուրբ Թադեոս և
Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ տարածվելով Հայաստա-
նում, պետական կրոն էր հռչակվել Սուրբ Գրիգոր Լուսավորչի առաքելությամբ,
Տրդատ թագավորի և արքունիքի դարձով: Մեկ դար էր անցել, և քրիստոնեական

հավարի նոր արշալույս ծագեց, երբ Սահակ Պարթև Կաթողիկոսի, Մեսրոպ վարդապետի օրնիքուն ջանքերով և անսկզբ գորակցությամբ Լուսինյան թաղային դպրոցներում կյանք առավ հայերենով ուսուցումը: Հորդաբուխ ակունքի նման տարածվելով՝ ասարվածմանաչ հոգու լույսը բազում պրոտեստանտական մշակույթի անդամներին հանգեցրեց: Անհազ ժառանգելով թարգմանիչին համաշխարհային մշակույթի գործեր, ծնունդ առան գիրական ու գրական ինքնությունը արժեքներ: Եվ սկսվեց հայ մշակույթի Ոսկեդարը, որպեսզի այնուհետ լայնահուն ընթանա հայ ժողովրդի մշակութային անընդմեջ ճանապարհը:

Զրիարունեական հայ մշակույթը հարազատ ու անբաժան մասն է համաքրիստոնեական մշակույթի: Ինչպես գիրքեր, բոլոր ժամանակներում ազգերը հարբաբանել են մշակութային առնչություններով ու փոխազդեցությամբ, պահպանելով, սակայն, սեփական հոգու ինքնօրինակությունը և այն յուրահատկությունը, որով առանձնանում է ազգը որպես հավաքականություն: Այս առումով մեր ժողովուրդը իր պարտության դժվարին քառուղիներում առանձնակիորեն է կարևորել գիրն ու դպրությունը, իր հոգևոր-մշակութային արժեքները, որոնցով մնացել է միասնական, լինելով սիոված տարբեր երկրներում, մնացել է մեկ ներաշխարհ՝ հայրենի հողի, հայրերի ժառանգության և իր Աստծո հետ՝ հույսով, կառուցելու ու արեղծելու, կյանքի սիրով: Այսօր ևս մշակութային առնչությունները կարող են միայն նպաստել ժողովուրդների երկխոսությանը, փոխադարձ ճանաչմանն ու համագործակցությանը:

Մեզ համար ուրախալի է, որ այս գիտաժողովին մասնակցում են մրավորականներ ու գիրականներ տարբեր երկրներից, և Մենք հավատում ենք, որ գիտաժողովը իր նպատակը պիտի ունենա մշակութային արժեքներն ու ավանդները անադարտ պահպանելու, արժեպնորելու և սերունդներին փոխանցելու գործում:

Հայցելով Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ մեր մեծ Ուսուցչապետների, մեր Սուրբ վարդապետների բարեխոսությունը, աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ խաղաղության մեջ պահպանի աշխարհը գորացյալ հավատով, հույսով ու սիրով, շարունակ պայծառացող՝ շնորհալի հոգու և մարքի արգասիքներով: Աղոթում ենք, որ Տերը բաջառող պահպանի Ձեզ և շնորհի հաջողություններ Ձեր գիրական գործունեության մեջ:

Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ և բարի ընթացք մաղթում գիտաժողովի աշխատանքներին:

Գիտաժողովը, կազմակերպված լինելով Գրերի Գյուլի 1600-ամյակի առիթով, ուներ առավել լայն ընդգրկում՝ նվիրված լինելով անդրկովկասյան երեք Աթոռներին՝ հայկական, վրացական և աղվանական, սրբեմանը և այն պայմանավորող պատմա-մշակութային նախադրյալներին և հանգամանքներին:

Նույն այս պարճառով գիտաժողովին հրավիրված էին գիրականներ Հայաստանից, Արաստանից և Ադրբեջանից, ինչպես նաև մի շարք հայագետներ Ավստրիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից, որոնք հանդես եկան երկու փասնյակ զեկուցումներով: